ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0010,ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. 511749

№ ԴԴ6-Ե 8476
№ ԵԿԴ/0148/11/12
«27» դեկտեմբերի 2012թ.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի
գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցին
/Լոռու մարզ, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

Ուղարկվում է «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցի բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2012 թվականի դեկտեմբերի 27-ի որոշման պատճենը:

Առդիր՝ որոշման պատճենը՝ «3» թերթից,

վճռաբեկ բողոքը՝ կից փաստաթղթերով՝ «24» թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ԱՎԱԳ ՕԳՆԱԿԱՆ՝ Լ.ԱԲԳԱՐՅԱՆ

ԵԿԴ/0148/11/12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 դեկտեմբերի 2012 թվական ք.Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քննարկելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 20-ի որոշման դեմ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ՝Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ից ՀՀ հատուկ քննչական ծառայություն հաղորդում է ստացվել այն մասին, որ 2012 թվականի օգոստոսի 18-ին իրենց է դիմել Վանաձորի բնակիչ Ն.Ափինյանը և հայտնել, որ 2012 թվականի օգոստոսի 17-ին բերման է ենթարկվել ոստիկանության Վանաձորի բաժին, որտեղ ոստիկանության աշխատակիցներն իր նկատմամբ դրսևորել են անհարգալից վերաբերմունք և հարկադրել են տալ բացատրություն:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ.Հովակիմյանի 2012 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառով:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ.Հովակիմյանի 2012 թվականի օգոստոսի 24-ի որոշման դեմ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցի բողոքի կապակցությամբ ՀՀ գլխավոր

դատախազության ավագ դատախազ Հ.Հարությունյանը 2012 թվականի սեպտեմբերի 5-ի գրությամբ հայտնել է, որ բողոքը մերժվել է:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցը 2012 թվականի սեպտեմբերի 18-ին բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2012 թվականի օգոստոսի 24-ի որոշումը և ՀՀ գլխավոր դատախազությանը պարտավորեցնել իր դիմում-բողոքի վերաբերյալ կայացնել որոշում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցի բողոքը մերժվել է:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2012 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ բողոքը մերժել է, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

Վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցը՝ խնդրելով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 20-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 6^1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի նույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի առաջին մասի որևէ կետի հիմնավորումները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, կամ

3) վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, կամ

4) առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:

Մինչդեռ Ա.Սաքունցի բողոքում բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը և դրանց հիմնավորումները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքը ենթակա է վերադարձման:

Հաշվի առնելով վերոշարադրյալ հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի նոյեմբերի 20-ի որոշման դեմ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սաքունցի վճռաբեկ բողոքը վերադարձնել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

Ս.ՕՀԱՆՅԱՆ